ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 10, 1956 Общественные науки

Լ. Խուրշուդյան

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ԲԱՔՎԻ ԿՈՄՈՒՆԱՆ

ՍՄԿՊ XX համագումարը սովետական պատմաբանների առջև դրեց մեծագույն խնդիրներ։ Հաղթահարելով անհատի կուլտի վնասակար հետևանքները, դուրս բերել Սովետական Միության Կոմունիստական պարտիայի, սովետական հասարակության պատմությունը այն քարացած վիճակից, որի մեջ գտնվում էր։

Այդ հատկապես վերաբերվում է Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների պատմությանը։

Առանց չափազանցության կարելի է ասել, որ անծայրածիր Ռուսաստանի ոչ մի շրջանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունը այնքան խեղաթյուրված չէ, որքան Անդրկովկասինը, հատկապես Կոմունայի պատմությունը։

Բաքվի կոմունայի հերոսական պայքարը միջազգային իմպերիալիզմի և ներքին կոնտրռևոլյուցիայի ուժերի դեմ Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմության մեջ մտել է որպես նրա լավագույն էջերից մեկը։ Շրջապատված կրակե օղակով, Կոմունան մինչև վերջին հնարավորությունը դիմադրել է թշնամու ուժերին և այդ մարտերի ընթացքում ծավալել տիտանական գործունեություն։

Բաքվի կոմունայի պատմության ուսումնասիրման բնագավառում գոյություն ունի երկու կարևորագույն թերություն։

1. Չնայած այն հանրահայտ փաստին, որ Վ. Ի. Լենինը սերտ նամակագրական կապ ուներ Ստ. Շահումյանի հետ և հոգատար կերպով ղեկավարում ու ցուցումներ էր տալիս Կոմունայի ղեկավարներին՝ միջազգային իմպերիալիզմի և ներքին կոնտրռևոլյուցիայի դեմ մղվող ծանր ու դժվարին պայքարում, Վ. Ի. Լենինի այդ դերը վերագրվում էր Ի. Վ. Ստալինին։

2. Փոխանակ խորը կերպով ուսումնասիրելու Անդրկովկասի յուրահատուկ պայմանները, անալիզի ենթարկելու դասակարգային և պարտիական ուժերի հարաբերությունը տվյալ ժամանակաշրջանում և դրանից անելու համապատասխան եզրակացություններ, սովետական պատմաբանները ծամծմում էին հակագիտական այն կոնցեպցիան, որի համաձայն Բաքվի կոմունայի անկման պատճառը իբր թե հանդիսանում էր կոմունարների թույլ տված տակտիկական սխալները։

Նկատի առնելով, որ մեկ հոդվածում անհնար է այդ բարդ և խճճված հարցերի մանրամասն պարզաբանումը և խորը հիմնավորումը, մենք նպատակ ենք դնում ընդհանուր գծերով տալու առաջ քաշված խնդիրների լուսաբանումը։

* * *

Տալով Սովետական իշխանության համար մղված պայքարի պատմությունը, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Անդրկովկասի վրա, որտեղ երկրամասի հետամնացության, բազմաթիվ ազգերի, ժողովուրդների և կրոն-

ների առկայության պատճառով, ստեղծվել էր այնպիսի յուրահատուկ պատմական իրադրություն, որը մի շարք կողմերով տարբերվում էր Ռուսաստանի կենտրոնական շրջաններում տիրող իրադրությունից։

Եթե կենտրոնական Ռուսաստանում հանդես էին գալիս հիմնականում բանվոր դասակարգի, գյուղացիության և բուրժուազիայի շահերը պաշտպանող քաղաքական պարտիաներ, ապա Անդրկովկասում դրանց թվին միանում էին ազգային և կրոնական կոնտրռևոլյուցիոն պարտիաները և խմբերը, որոնք դժվարացնում էին բոլշևիկների տակտիկական գծի կենսագործումը։

Դասակարգային ուժերի տեղաշարժերը հասարակական կյանքում և դրա հիման վրա Անդրկովկասի քաղաքական պարտիաների քաղաքականությունը լիովին բխում էին երկրամասի ազգային և կրոնական հակասություններով պայմանված, բարդ ու խճճված քաղաքական և տնտեսական հարաբերություններից։

Բնական է, որ, այդպիսի պայմաններում, Անդրկովկասի տնտեսական, քաղաքական և ազգային բարդ հարաբերությունների խորը մարքսիստական անալիզի դեպքում միայն հնարավոր կդառնար մշակել բոլշևիկյան պարտիայի անդրկովկասյան ջոկատի մարտական տակտիկան։

Անդրկովկասի բոլշևիկների պայքարը կազմակերպում էր Ստ. Շահումյանը՝ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։

Թե ինչ վերաբերմունք էր ցույց տալիս Վ. Ի. Լենինը Ստ. Շահումյանի վարած քաղաքականությանը և ինչպես էր օգնում իր խորհուրդներով ցույց է տալիս նրա 1918 թ. փետրվարի 14-ի նամակը, որում առաջնորդը գրում էր.

«Թանկագին ընկեր Շահումյան։

Շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից։ Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որը անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ,— և մենք կհաղթենք։

Դժվարություններն անհաշիվ են։ Առայժմ մեզ փրկում են միայն իմպերիալիստների հակասությունները, կոնֆլիկտներն ու պայքարը։ Կարողացեք օգտագործել այդ կոնֆլիկտները, առայժմ հարկավոր է դիվանագիտություն սովորել։

Լավագույն ողջույններ ու ցանկություններ և ողջույն բոլոր բարեկամներին»[1]։

Վ. Ի. Լենինի և Ս. Գ. Շահումյանի նամակագրական կապը պահպանում էին 3 սուրհանդակներ։ Նրանցից մեկը՝ Դ. Գևորգյանը պատմում է, որ միայն ինքը 20 անգամ նամակ է տարել Մոսկվա Լենինին և բերել պատասխանները։ Դժբախտաբար քաղաքացիական կռիվների տարիներին այդ փաստաթղթերի մեծ մասը կորել են, գուցե և գտնվում են դեռևս չհետազոտված արխիվներում, ամենայն դեպս հայտնի չեն գիտական աշխատողներին։

Չնայած դրան՝ պահպանված նամակները և մի շարք այլ փաստաթղթեր պարզ կերպով ցույց են տալիս այն անգնահատելի դերը, որ ունեցել է Վ. Ի. Լենինը Բաքվի կոմունայի ղեկավարման գործում։

Անդրկովկասի բանվոր դասակարգի պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար 1918 թվականի մարտին պսակվեց հաջողությամբ։

---

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 35, էջ 339։

Ջախջախելով մուսավաթիստական կոնտրռևոլյուցիոն ուժերի զինված ելույթը, բոլշևիկները ստեղծեցին առաջին սոցիալիստական իշխանությունը Անդրկովկասում՝ Բաքվի կոմունան։

Բաքվի կոմունայի պատմությունը դա միջազգային իմպերիալիզմի և ներքին կոնտրռևոլյուցիայի ուժերի դեմ, անհավատալի ծանր պայմաններում մղված հերոսական պայքարի պատմություն է։

Միջազգային իմպերիալիզմը շարժվում էր դեպի Անդրկովկաս՝ նպատակ ունենալով առաջին հերթին գրավել Բաքվի նավթային հարստությունները։ Պարսկաստանի կողմից դեպի Բաքու էին շարժվում անգլիական զինված ուժերը, Թուրքիայից՝ Վրաստանի և Հայաստանի տերիտորիայով՝ գերմանա-թուրքական զորքերը։

Դեպի Բաքու էին շարժվում նաև անդրկովկասյան կոնտրռևոլյուցիայի՝ Սեյմի և Գյանջայում կենտրոնացված ադրբեջանական մուսուլմանական կոմիտեի զինված ուժերը։

Եթե Անտանտի, Քառյակ Միության և Սեյմի զինված ուժերին միացնենք էսեռա-մենշևիկյան և նացիոնալիստական պարտիաների դավաճանական գործունեությունը քաղաքում, հնարավոր կդառնա պատկերացնել, թե ինչպիսի պայմաններում էին աշխատում Բաքվի բոլշևիկները՝ մի կողմից կատաղի մարտեր մղելով միջազգային իմպերիալիզմի և ներքին կոնտրռևոլյուցիայի զինված ուժերի դեմ, մյուս կողմից՝ ներքին քաղաքականության բնագավառում իրագործելով սոցիալիստական մեծ վերափոխություններ։

Բաքվի կոմունան գտնվում էր Վ. Ի. Լենինի ուշադրության կենտրոնում, որը անմիջականորեն ղեկավարում էր այդ գործը Մոսկվայից, չնայած հաղորդակցության դժվարին պայմաններին։

Քաղաքացիական կռիվների պատճառով, հարցերի արագ վճռման անհրաժեշտության պայմաններում, նամակագրական կապը իրեն չէր արդարացնում։

Ինչ վերաբերվում է հեռագրական կապին, որը առանց այն էլ անմխիթար վիճակի մեջ էր, 1918 թ. մայիսին Դոնի Ռոստովը ատաման Կրասնովի կողմից գրավելուց հետո վերջնականապես կտրվեց։

Որոշվում է Բաքվի հետ կապ հաստատել Աստրախանի վրայով։

Մայիսի վերջերին Մոսկվայից հեռագրում են Աստրախանի փոստ-հեռագրի նահանգական կոմիսարին. «Փոստ-հեռագրի ժողովրդական կոմիսարիատը կարգադրում է Պետրովսկու վրայով Բաքվի հետ անհապաղ կապ հաստատել։

Որոշել ինֆորմացիայի փոխհարաբերության ժամանակը։ Կազմակերպեցեք ձեր կայարանում հերթապահություն Բաքվից արտակարգ հաղորդագրություններ ստանալու համար, առաջին հերթին ստացած հաղորդագրությունը հաղորդեցեք փոստ-հեռագրի նարկոմին»[1]։

Միևնույն ժամանակ մեծ աշխատանք էր կատարվում երկու քաղաքների միջև ռադիո-հեռագրական կապի ստեղծման համար։ Նկատի ունենալով կապի անմխիթար դրությունը դեռ 1918 թ. ապրիլի 13-ին Ս. Շահումյանը գրում էր Բոդկոմսովետին. «...Ես խնդրում եմ միայն ռադիոստանցիայի մասին։

---

[1] «Տեղեկատու», № 36, 1918, Բաքու։

Հնարավորություն չկա Ձեզ հետ կապվելու, եթե հնարավոր է ուղարկեցեք անհրաժեշտ հարմարանքները»[1]։

Այդ նամակը ստանալուց հետո Վ. Ի. Լենինը Բաքու է ուղարկում ինժեներ Գրոմաղչիկովին, ռադիո-հեռադրական կապի հաստատման համար։

Հենց այդ մասին է խոսում Ստ. Շահումյանի հետևյալ չհրապարակված նամակը, որտեղ նա գրում էր.

«Թանկագին Վլադիմիր Ալյիչ.

Սույնը ներկայացնող ընկ. Գուկալովը ուղարկվում է ինժեներ Գրոմաղչիկովի կողմից, որը այստեղ է եկել Ձեր մանդատով, ստանալու համար Մոսկվայում ռադիո-տելեգրաֆի մասերը և ծովային տիպի 10 կիլովատանոց ռադիո-ստանցիան։

Խնդրում եմ տաք նրան Ձեր հանձնարարականը, որպեսզի նրան չուշացնեն. Այսօր կամ վաղը Ձեզ մանրամասն կգրեմ մեր գործերի մասին։

Ջերմ ողջույնով

Ս. Շահումյան»[2]։

29/VI

Մեծ դժվարություններով հաջողվում է վերականգնել կապը, որը հնարավորություն է տալիս Վ. Ի. Լենինին մշտական կապ ունենալու Կոմունայի ղեկավարների հետ։

Բաքվի բոլշևիկների առջև դրված էին լուրջ և պատասխանատու խնդիրներ. նոր պետական ապարատի ստեղծումը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդումը, նավթային արդյունաբերության և Կասպիական նավատորմի ազգայնացումը, Կարմիր բանակի ամրապնդումը, պարենային ծանր պրոբլեմի լուծումը, միջազգային իմպերիալիզմի և Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ մղվող պայքարի կազմակերպումը՝ ամբողջ երկրամասում Սովետական իշխանություն հաստատելու համար։

Բաքվի բոլշևիկները Ստ. Շահումյանի ղեկավարությամբ պայքարում էին այդ խնդիրների իրականացման համար, որոնց լուծումը ուժերի մեծ լարում էր պահանջում։

Նոր պետական ապարատի ստեղծման և մյուս խնդիրների լուծման հետ միասին՝ հատուկ ուշադրություն էր դարձվում նավթարդյունաբերությունը կործանումից փրկելու և նավթի արտահանումը դեպի Ռուսաստան ուժեղացնելու խնդրի վրա, քանի որ Բաքվի բոլշևիկները գտնում էին, որ վառելիքի բազաներից կտրված ռևոլյուցիոն Ռուսաստանին նավթ մատակարարելու խնդիրը հանդիսանում է Կոմունայի կարևորագույն խնդիրներից մեկը, եթե ոչ ամենակարևորը։

Սովետական կառավարությունը և անձամբ Վ. Ի. Լենինը, մեծ ուշադրություն էին դարձնում նավթի հանույթի արտահանության ուժեղացմանը և բանվորների նյութական դրության բարելավմանը։

1918 թ. մայիսի 22-ին ԺողկոմսովետըՎ. Ի. Լենինի առաջարկով որոշում է 100 միլ. ռուբլի դնել ԺՏԳԽ-ի վառելիքի բաժնի տրամադրության տակ՝

---

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալ, ֆ. 7, օգտագործվում է առաջին անգամ։

[2] Նույն տեղում, ֆ. 7, օգտագործվում է առաջին անգամ։

Բաքվից նավթ արտահանելու և նավթահանքերի բանվորների աշխատավարձը վճարելու համար[1]։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ, Վիսնարխոզնեվթը մշակեց Բաքվի նավթարդյունաբերության վերականգնման մի ընդարձակ պլան, որի իրագործման համար որոշվեց.

1) Բաքվին ցույց տալ խոշոր ֆինանսական օգնություն.

2) Բաքվի Հյուսիսային Կովկասում գտնվող պարեն մթերող գործակալներին բաց թողնել մանուֆակտուրա, թեյ, շաքար, մեխ, կոշիկներ և այլ ապրանքներ՝ հացի հետ փոխանակելու համար.

3) Նավթահանքերի աշխատանքները վերականգնելու համար ուղարկել անհրաժեշտ նյութեր և այլն։

Բայց, չնայած կառավարության ձեռք առած մի շարք միջոցառումներին, Բաքվի նավթարդյունաբերողների սաբոտաժի պատճառով նավթի հանույթը և արտահանությունը քանի գնում ընկնում էր։

Բաքվի բոլշևիկները գտնում էին, որ նավթի հանույթի բարձրացման և արտահանության ուժեղացման միակ միջոցը նավթարդյունաբերության ազգայնացումն է։

Դեռևս 1918 թ. ապրիլի 13-ին Ս. Շահումյանը գրում էր ԺողԿոմսովետին. «Նավթարդյունաբերության ազգայնացման հարցը վաղուց է լուծված, որը պատրաստվում ենք իրականացնել»[2]։

Բայց այս հարցում Բաքվի կոմունայի բոլոր պատմաբաններն էլ աղավաղել, խեղաթյուրել են փաստերը, Լենինի կատարած վիթխարի դերը վերագրելով Ստալինին, մինչդեռ ինչպես ցույց են տալիս փաստերը, բոլոր կարևորագույն հարցերի լուծման ժամանակ Ստ. Շահումյանը խորհրդակցում էր Վ. Ի. Լենինի հետ։

Մեր միտքը մենք կարող ենք ապացուցել հետևյալ փաստով։ Մայիսի 10—20 Բաքվում ստացված ԺողտնտնավթԽորհի հեռագիրը՝ նավթի հանույթի բարձրացման մասին, այնպիսի տպավորություն էր ստեղծում, որ ազգայնացումը արդեն հաստատված է։ Հեռագրի վերջին մասում առաջարկվում էր աշխատավարձի վճարման և բանվորների աշխատանքի հետ կապված բոլոր նորմաները մշակել «համապատասխան ամբողջ Ռուսաստանի ազգայնացման ենթարկված արդյունաբերության գոյություն ունեցող նորմաների»[3]։

Ստ. Շահումյանը, նկատի ունենալով այդ հեռագիրը և Բաքվին 100 միլիոն ռուբլի տրամադրելու որոշումը, մայիսի 27-ին հեռագրում է Վ. Ի. Լենինին, որ «ընդունված որոշումները հասկանում ենք որպես ազգայնացում։ Կասկած է առաջացնում կառավարական դեկրետների բացակայությունը։ Եթե խոշրնդոտներ չկան հեռագրեցեք ավելի որոշակիորեն։ Ողջունում եմ որոշումը»[4]։

Ինչպես տեսնում ենք, մայիսի 27-ին Շահումյանը խնդրում է Վ. Ի. Լենինից որոշակիորեն հայտնել՝ դեկրետը եղե՞լ է, թե ոչ։ Բնական է, որ մայիսի 27-ին այդպիսի հեռագիր տալով Ս. Շահումյանը հունիսի 1-ին, առանց Լենինից պատասխան ստանալու չէր կարող ընդունել նավթարդյունաբերության ազգայնացման մասին դեկրետը։

---

[1] Տես Красный Архив, № 4—5, стр. 13, 1938.

[2] Ս. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 567, 1948։

[3] ԱՍՍՌ, ՀՌԿՊԱ, ֆ. 11, ցուց. 2, գ. 22, թ. 64—68։

[4] Ս. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 602, 1948։ Ընդգծումը մերն է։

Իրականում կատարվել է հետևյալը.

Մայիս ամսին Ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշում է ընդունում (և ոչ թե դեկրետ) նավթարդյունաբերության ազգայնացման մասին, նրա՝ կյանքում կիրառումն հետաձգելով մինչև համապատասխան նախահաշվի կազմումը։

Չնայած այն հանգամանքին, որ նավթային արդյունաբերության ազգայնացման անմիջականորեն իրականացման մասին ոչ մի որոշում չէր եղել, Ի. Ստալինը մայիսի 28-ին հեռագրում է Բաքու. «Ժողովրդական Կոմիսարների Սովետը հաստատել է նավթային արդյունաբերության ազգայնացումը։ Մանրամասն հրահանգները իր հետ բերում է Ձեր Գաբրիելյանը, որը դուրս է եկել մայիսի 26-ին...»[1]

Համաձայն այս հեռագրի՝ Բաքվի Ժողկոմսովետը Շահումյանի առաջարկությամբ հունիսի 1-ին ընդունում է նավթարդյունաբերության ազգայնացման մասին դեկրետը, որը հրապարակվում է հունիսի 2-ին։

Տեղեկանալով Բաքվի Սովետի այդ որոշման մասին, ԺՏԳԽ-ի և Գլավկոնեվթի դեկավարները պահանջում են Բաքվի բոլշևիկներից չեղյալ հայտարարել այդ դեկրետը, հայտնելով, որ ազգայնացման անմիջական իրականացման մասին ոչ մի դեկրետ չի ընդունվել։

Այս բոլորը բարդացնում են դրությունը և Բաքվի բոլշևիկներին գցում անելանելի դրության մեջ, որովհետև նավթարդյունաբերության ազգայնացման դեկրետի ընդունումից հետո ոչ մի կերպ հնարավոր չէր չեղյալ հայտարարել այն։ Դեկրետի չեղյալ հայտարարելը կտաներ դեպի նավթարդյունաբերության վերջնական քայքայումը։

Խոսելով նավթարդյունաբերության ազգայնացման դեկրետի ընդունման մասին, Ստ. Շահումյանը Բաքվի Սովետի հունիսի 22-ի նիստում ասում էր. «Դուք գիտեք, որ ազգայնացումը մենք հայտարարեցինք Ժողովրդական Կոմիսարների Կենտրոնական Սովետի որոշման հիման վրա։

Ես ընկեր Ստալինից նամակ եմ ստացել, որի մեջ վերջում ավելացված է, որ այդ նամակը կարդացել ու հավանություն է տվել ընկ. Լենինը և որ այդ բոլորն, ինչ ասված է այս նամակում՝ պաշտոնական բնույթ է կրում ու ելնում է Ժողովրդական Կոմիսարների Սովետից։ Այնուհետև ընկեր Ստալինից ստացված երեք հեռագրերում վճռականապես հայտարարվում է, որ ազգայնացումը հաստատվել է...»[2]։

Փաստերը ցույց են տալիս, որ Ի. Վ. Ստալինը լիազորված չի եղել ոչ Լենինի և ոչ էլ Ժողկոմսովետի կողմից, այդպիսի հեռագրեր տալու, հակառակ դեպքում ոչնչով չի կարելի բացատրել Վ. Ի. Լենինի Ս. Գ. Շահումյանի հարցումին տված պատասխան հեռագիրը, որի մեջ ասվում էր.

«Նավթային արդյունաբերության ազգայնացման մասին դեկրետը դեռևս չի եղել։ Մտադիր ենք նավթային արդյունաբերության դեկրետավորումը կատարել նավարկության վերջում։

Առայժմ դեռ կազմակերպում ենք նավթամթերքների առևտրի պետական մոնոպոլիան։ Ձեռք առեք բոլոր միջոցները Վոլգայով նավթամթերքների արագ արտահանության համար։

[1] „Известия Бакповета", № 104, 1918.

[2] Ստ. Շահումյան. Ընտիր երկեր, էջ 643, 1948։

Ամեն օր տեղեկություններ հայտնեցեք Գլավկոնեվթին՝ նավթարդյունաբերության վիճակի մասին»[1]։

Լենինյան այս փաստաթուղթը մինչև անտեսվել է։

Շահումյանը մի շարք հեռագրեր և նամակներ է ուղարկում Վ. Ի. Լենինին, գրելով. «Մենք խճճել են այդ հարցի մեջ»[2] և բացատրելով, որ դրանից հետո ինչ արվել է այլևս վերադարձ լինել չի կարող դեպի հինը։

Նկատի առնելով ստեղծված բարդ դրությունը և Շահումյանի ու Բաքվի ԺՏԳԽ-ի մյուս ղեկավարների պատճառաբանությունները, հունիսի 20-ին Ժողկոմսովետը քննարկում է այդ հարցը և դեկրետ ընդունում նավթային արդյունաբերության ազգայնացման մասին։

Ահա այս է նավթային արդյունաբերության ազգայնացման համար մղված պայքարի իսկական պատմությունը։

Բաքվի Ժողկոմսովետի առջև ծառացած դժվարագույն հարցերից մեկը հանդիսանում էր պարենային վատթար դրության կարգավորումը։

Բաքվի պրոլետարիատի դրությունը կրիտիկական էր։ Բաքվի բնակչությունը լարիս բուն իմաստով քաղցած էր։ Բաքվի Սովետը մի շարք լուրջ միջոցառումներ է ձեռնարկում՝ այդ դրությունից դուրս գալու համար։

Դեռ մարտի 26-ին հաշվառման են առնվում ծխախոտի, մակարոնի, օճառի, մանուֆակտուրայի բոլոր տեղական ֆաբրիկաները, թեյի և շաքարի պահեստները, խոշոր արհեստանոցները, հատկապես ջրաղացները, որտեղ նշանակվում են հատուկ լիազորություններ ունեցող կոմիսարներ։

Զարկ տրվեց Հյուսիսային Կովկասում, Սիբիրում, Անդրկասպյան երկրամասում, կենտրոնական Ռուսաստանում և երկրի այլ բազմաթիվ շրջաններում գործող՝ Բաքվի մթերման գործակալությունների աշխատանքներին։ Առևտրական հարաբերություններ հաստատվեցին պարսկական վաճառականների հետ։

Անողոք պայքար է սկսվում կաշառակերության, գողության և սպեկուլյացիայի դեմ։

Ձեռք առնված միջոցառումների շնորհիվ արագ կերպով տեղերում մթերվում է մեծ քանակությամբ պարենամթերք, բայց քաղաքացիական պատերազմի ծանր պայմաններում, տրանսպորտի քայքայվածության պատճառով հնարավոր չի դառնում մթերված պարենամթերքը հասցնել Բաքու։

Նույնիսկ Ադրբեջանի շրջաններում հնձված բերքը այդ նույն պատճառնելով չհաջողվեց փոխադրել Բաքու։

Սովետական Ռուսաստանը՝ չնայած այն հանգամանքին, որ կտրված էր հացառատ վայրերից, այնուամենայնիվ ձեռք էր առնում բոլոր միջոցները Բաքվին օգնելու համար։

Ինչպես մյուս հարցերում, այս խնդրում ևս Վ. Ի. Լենինը գործուն մասնակցություն է ցույց տալիս։

Հունիսի 30-ին Բաքվի «Տեղեկատու» թերթը տպագրում է Վ. Ի. Լենինի հեռագիրը Ստ. Շահումյանին, որի մեջ ասվում էր. «Ժողովրդական Կոմիսարների Սովետը որոշել է անհապաղ Ցարիցինից Բաքու ուղարկել մեծ քանակությամբ հաց և հանձնել Բաքվի Սովետին, որպեսզի նավթի առաքումն անպայման ապահովի»[3]։

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. XXXV, էջ 24։

[2] «Պարտիական կյանք», № 6, էջ 26, 1936։

[3] «Տեղեկատու», № 34, 1918։

Ինչպես երևում է՝ այս փաստաթուղթը միակը չէ, քանի որ մայիսի 30-ին Ս. Շահումյանի Ցարիցին՝ Օրջոնիկիձեին տված հեռագրից երևում է, որ Լենինը մի շարք անգամներ դիմել է այդ հարցով Ցարիցին։ Այդ հեռագրում ասվում է. «Բաքվի պրոլետարիատը ապրում է ծանր պարենային կրիզիս։ Իսկական սով է։ Ձեր բազմաթիվ խոստումները և Լենինի կարգադրությունները Ցարիցինից հաց ուղարկելու մասին Ձեր կողմից չեն կատարվում...»[1]։

Կատարելով Վ. Ի. Լենինի կարգադրությունը, Ս. Օրջոնիկիձեն հեռագրում է Բաքվի կոմունայի ղեկավարներին. «Վաղն ուղարկում ենք տասը հազար փութ հաց՝ ջրային ճանապարհով։ Կարգադրություն է արված անհապաղ մարշրուտային գնացքներ ուղարկել Ստավրապոլի նահանգից և Թերեքի մարզից»[2]։

Ինչպես տեսնում ենք, Վ. Ի. Լենինը հիանալի ծանոթ էր Բաքվի պարենային դրությանը և ջանք չէր խնայում փրկելու հերոսական քաղաքի պրոլետարիատին սովի ճիրաններից։

Բացի Բաքվի կոմունայի ներքին քաղաքականության հիմնական հարցերի լուծմանը ունեցած մասնակցությունից, Վ. Ի. Լենինը հատուկ ուշադրություն էր դարձնում միջազգային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի կազմակերպմանը։

Ինչպես մենք նշեցինք վերևում, միջազգային իմպերիալիզմի զինված ուժերը շարժվում էին դեպի Բաքու, քաղաքի նավթային հարստությունների գրավման համար։

Ստ. Շահումյանը լավ գիտեր միջազգային իմպերիալիզմի նպատակները և այդ մասին տեղյակ էր պահում Կենտրոնական կառավարությանը և անձամբ Վ. Ի. Լենինին։ Դեռ մայիսի 20-ին նա հեռագրում է Մոսկվա.

«Թիֆլիսից ստացված բոլոր տեղեկությունները խոսում են Բաքվի վրա թուրքերի կողմից նախապատրաստվող արշավանքի մասին։ Մեզ անհրաժեշտ է շտապ օգնություն»[3]։

Մի քանի օր հետո նա նորից հեռագրում է. «Թուրքերը Հարաքիլիսա — Դիլիջան — Աղստաֆա խճուղով շարժվում են դեպի Բաքու։ Համաձայն ստորագրված պայմանագրի թուրքերը մոտ օրերս սկսում են զորքերի տեղափոխումը դեպի Բաքու և Ջուլֆա։ Հայտնում եմ, որ հարձակումը սկսված է»[4]։

Թուրքական զորքերը նպատակ ունեին միանալ Գյանջայում կենտրոնացված մուսավաթիստական զորքերին և միացյալ ուժերով շարժվել Բաքվի վրա։

Ստ. Շահումյանը գտնում էր, որ տվյալ պայմաններում միակ ճիշտ տակտիկան դա հարձակողական տակտիկան է։ Նա գրում էր. «Սակայն մենք պետք է հանդիպենք թշնամուն ոչ թե այնտեղ, ուր նա կցանկանա, այլ այնտեղ, ուր մեզ օգտակար կլինի։ Հարձակողական տակտիկան համարվում է ավելի լավ ու ավելի ճիշտ»[5]։

Ստ. Շահումյանը անհրաժեշտ էր համարում ջախջախել Գյանջայում կենտրոնացված մուսավաթիստական զինված ուժերը՝ մինչև թուրքերի նրանց միանալը։ Բաքվի Կարմիր բանակի հարձակումը կազատագրեր Անդրկովկասի

---

[1] „Известия Бакинского совета", № 104, 1918.

[2] „Бакинский рабочий", № 110, 1918.

[3] Труды Аз. филиала Института марксизма-ленинизма, т. XII, стр. 185, Баку, 1948.

[4] Труды Аз. филиала Института марксизма-ленинизма, т. VI, стр. 68, Баку, 1947.

[5] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 640—641։

գյուղացիությանը, որով իմպերիալիզմի ուժերի դեմ մղվող պայքարը ավելի կուժեղանար։

Հարձակման խնդիրները հաջող կատարելու համար լրացուցիչ հարկավոր էր 2—3 դիվիզիա, և որովհետև ուշացումը հավասար էր մահվան, Բաքվի Ժողկոմսովետը որոշեց անմիջապես սկսել հարձակումը։ Բաքվի Ժողկոմսովետը ձեռք առավ նաև մի շարք միջոցառումներ բանակի ուժեղացման համար։

Այդ բոլոր նախապատրաստությունների մասին Շահումյանը տեղյակ էր պահում Վ. Ի. Լենինին։

Մինչև հարձակումը սկսելը Շահումյանը կատարում է մի կարևոր քայլ ևս։ Նա իրագործելով Վ. Ի. Լենինի ցուցումները իմպերիալիստական պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունների օգտագործման, խուսանավման մասին, որոշում է չեզոքացնել վրացական կառավարությունը։ Հունիսի 6-ին Շահումյանը նամակ է գրում Ն. Ժորդանիային առաջարկելով թույլ չտալ վրացական երկաթուղիներով թուրքական զորքերի փոխադրումը դեպի Բաքու։ Բաքուն Թիֆլիսից կտրված լինելու պատճառով բանակցությունների գործը իրենց վրա են վերցնում Երկրային կոմիտեի Թիֆլիսում գտնվող անդամները։

Բանակցությունների օրը Շահումյանը ևս իր հերթին հեռախոսով բանակցում է Ն. Ժորդանիայի հետ։

Բայց բանակցությունները անարդյունք վերջացան, որովհետև Վրաստանը արդեն փաստորեն օկուպացիայի էր ենթարկվել գերմանական զորքերի կողմից։

1918 թվականի մամուլը ուսումնասիրելիս մենք Բաքվի «Бюллетени Диктатуры Центрокаспия и президиума Временного Исполнительного Комитета» թերթի սեպտեմբերի 8-ի համարում և «Արև» թերթի սեպտեմբերի 10-ի համարում գտանք Վ. Ի. Լենինի 1918 թ. մայիսի 14-ին Շահումյանին գրած հետևյալ նամակը.

«24 мая 1918 г., Москва.

Дорогой товарищ Шаумян!

Пользуюсь оказией, чтобы еще раз послать Вам пару слов (недавно послал Вам письмо с оказией, получили ли Вы?).

Положение Баку трудное в международном отношении. Поэтому советовал бы попытать блок с Жордания. Если невозможно — надо лавировать и оттягивать решение, пока не укрепитесь в военном отношении. Трезвый учет и дипломатия для оттяжки — помните это.

Наладьте радио и через Астрахань пошлите мне письма.

Лучшие приветы. Ваш Ленин»[1].

Քանի որ նամակը հրապարակված է եղել ոչ բոլշևիկյան մամուլում, ապա բնական է, որ կարող են կասկածներ առաջանալ թե կեղծված չէ՞ այն արդյոք։

Վ. Ի. Լենինի նամակում առաջ է քաշվում երկու հիմնական հարց։ Առաջին. փորձել բլոկ ստեղծել Ժորդանիայի հետ։ Երկրորդ. եթե այն հնարավոր

[1] Бюллетени Диктатуры Центрокаспия и президиума Временного Исполнительного Комитета. № 33, 8 сентября 1918 г.

չէ, ապա սպասել, խուսանավել մինչև ամրանալը։ Հուլիսի սկզբներին Վ. Ի. Լենինին գրած նամակում Շահումյանը հայտնում է. «Դուք Ձեր փոքրիկ նամակում, որ բերել է ինձ Տեր Գաբրիելյանը, գրում եք, թե նկատի ունենալով մեր դրության դժվարությունը միջազգային տեսակետից՝ ավելի լավ է սպասել, մինչև ամրանանք։ Մենք իհարկե դրան սպասել ենք և ամրացել...»[1]։

Այնուհետև նույն նամակում Շահումյանը կրկնելով Վ. Ի. Լենինի խոսքերը, գրում է. «Մեր դրությունը միջազգային տեսակետից իրոք որ դժոխային է»։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Վ. Ի. Լենինի նամակում առաջ քաշված հարցերից մեկը հաստատվում է Ստ. Շահումյանի սույն նամակից բերված հատվածներով։

Ինչ վերաբերվում է մյուս հարցին՝ Ժորդանիայի հետ բանակցություններ վարելու առաջարկին, այդ մասին պահպանվել է Նազարեթյանի նամակը Ս. Շահումյանին, որում նա մեղադրում է Շահումյանին և Լենինին Ժորդանիայի հետ բանակցություններ վարելու համար[2]։

Ահա այս տվյալները մեզ բերում են այն համոզմանը, որ նամակը պատկանում է Վ. Ի. Լենինի գրչին և կեղծված չէ։

Ինչ վերաբերում է Նազարեթյանի մեղադրանքին, ապա այն անհիմն է և բխում է նրանից, որ նա լավ ծանոթ չէր քաղաքական իրադրության նրբություններին։

Բանն այն է, որ իրոք մայիս ամսին բլոկ ստեղծելու հնարավորություն կար։ Վ. Ի. Լենինը, որը ուշադիր կերպով հետևում էր Անդրկովկասի քաղաքական կյանքի զարգացմանը, իսկույն նկատելով այդ հնարավորությունը, նամակ է գրում Շահումյանին, առաջարկելով փորձել Ժորդանիայի հետ բլոկ ստեղծել։ Բայց վատ նամակագրական կապի պատճառով (նամակները ուղարկվում էին սուրհանդակների միջոցով) մինչև բանակցությունների կազմակերպումը վրա է հասնում հունիս ամսվա վերջը և քաղաքական իրադրության արագ զարգացման պայմաններում լիկվիդացիայի են ենթարկվում այն բարենպաստ պայմանները, որոնք ի նկատի ունենալով Վ. Ի. Լենինը գրել էր այդ նամակը։

Նամակը ցույց է տալիս, որ Վ. Ի. Լենինը իրոք հիանալի ծանոթ էր Անդրկովկասի քաղաքական իրադրությանը և ամենօրյա ղեկավարություն էր ցույց տալիս։

Բոլոր անհրաժեշտ նախապատրաստությունները տեսնելուց հետո. հունիսի 10-ին սկսվում է Բաքվի կոմունայի զորքերի առաջշարժումը։ Բաքվի զորքերը սկսեցին հաղթականորեն առաջ շարժվել։ Հունիսի 11-ին նրանք գրավեցին Սագիրի կայարանը, 12-ին Քյուրդամիր գյուղը և կայարանը, 16-ին Կարամարյան գյուղը և մոտեցան Գեոկչային։

Ինտերվենտները և ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերը սարսափի մեջ էին ընկել։ Նրանք անմիջապես ակտիվ գործողությունների են անցնում Բաքվի զորքերի հաղթական արշավը կանգնեցնելու համար։

Հունիսի 12-ին Բաքվում հեղաշրջման փորձ է կատարվում, որը գաղտնի կերպով ղեկավարում էր անգլիական կոնսուլ Մակ-Դոնելը։ Հեղաշրջման նախապատրաստմանը ակտիվ կերպով մասնակցում էր պարսկական կոնսուլ Մա-

[1] «Պարտիական կյանք», № 6, 1936, էջ 34—35։ Ընդգծումը մերն է։
[2] Տես С. Шаумян, Бакинская коммуна, 1927, стр. 98.

Ջեգիան Սայիդ Ալի Վիզարը, որը այդ գործի համար հետագայում սպիտակգվարդիական հրամանատարության կողմից պարգևատրվեց շքանշանով։

Հեղաշրջումը անմիջականորեն պետք է իրագործեին էսեռները։ Խռովարարները մտադիր էին ձերբակալել Ստ. Շահումյանին և Բաքու հրավիրել անգլիացիներին։ Հեղաշրջման փորձը իսկույն ճնշվեց, իսկ նրա ղեկավարները ձերբակալվեցին։

Դրանից անմիջապես հետո, հերքելով թշնամիների տարածած լուրերը այն մասին, թե իբր Բաքվի Սովետը համաձայնագիր է կնքել անգլիացիների հետ, Շահումյանը և Ջապարիձեն մի հեռագրով դիմում են Լենինին և Պետրովսկի, Եկատերինոդարի, Աստրախանի, Ցարիցինի, Սարատովի Սովդեպներին հայտարարում, որ «Իմպերիալիստական ամեն մի ձգտման, որ կողմից էլ այդ երևան գա, կտրվի հարկավոր հարվածը Բաքվի պրոլետարիատի և Կովկասյան Կարմիր Բանակի կողմից»[1]։

Եթե անգլիական իմպերիալիստները բավարար չափով զինված ուժեր չունենալու պատճառով գործում էին ինտրիգների միջոցով, ապա գերմանա-թուրքական իմպերիալիստները վախեցած Բաքվի բանակի հաջողություններից, զգալի թարմ ուժեր նետեցին ռազմաճակատ։ Թուրքական 15 հազարանոց զորքի ժամանումից հետո (իսկ այդ զորքերին ղեկավարում էին գերմանական սպաները) դրությունը ռազմաճակատում արմատապես փոխվեց։

Հունիսի 27—30-ը Գեոկչայի շրջանում, չորս օր շարունակվող արյունահեղ մարտերից հետո, թշնամու անհամեմատ ուժեղ զորքերի ճնշման տակ Բաքվի բանակը սկսեց նահանջել։

Գեոկչայի տակ մղած մարտերը պատերազմական գործողությունների ընթացքի վրա ունեցան վճռական նշանակություն։ Վերջացավ պատերազմի առաջին շրջանը, երբ նախաձեռնությունը գտնվում էր Բաքվի զորքերի ձեռքում։ Հարձակողական մարտերը վերածվեցին պաշտպանողականի։

Բաքվի Ժողկոմսովետը նորից մի շարք միջոցառումներ է ձեռնարկում թշնամու հարձակումը կանգնեցնելու և հակահարձակման անցնելու համար։ Հունիսի 30-ին հրապարակվում է Բաքվի Ժողկոմսովետի և Սովետի Գործկոմի հրամանը 1893—1897 թթ. ծնվածներին բանակ կանչելու մասին։ Հուլիսի 6-ին հրապարակվում է մի այլ հրաման, որի համաձայն հայտարարվում էր նավաստիների զորահավաք՝ ծովային գումարտակ կազմելու և նավաստիների կազմը համալրելու համար։ Բացի տեղում կատարված միջոցառումներից Բաքվի Սովետը Մոսկվա է գործուղում իր ներկայացուցչին՝ օգնության գործը արագացնելու համար։ Բաքվի Սովետը Մոսկվայից խնդրում էր 2—3 դիվիզիա, զենք և զինամթերք։ Բայց Ռուսաստանը, որը գտնվում էր ծանր դրության մեջ, ի վիճակի չէր տվյալ մոմենտին բավարարելու Բաքվի Սովետի հիմնական պահանջը և նրան ուղարկելու 2—3 դիվիզիա։

Այնուամենայնիվ, չնայած ծանր դրությանը, ձեռք առնվեցին բոլոր միջոցները հնարավորին չափ զորք և մեծ քանակությամբ զենք և զինամթերք ուղարկելու համար։

Բաքվին օգնելու գործը անմիջականորեն ղեկավարում էր Վ. Ի. Լենինը։

Նա ընդունելով Բաքվի Սովետի ներկայացուցչին, մանրամասն լսում է նրան և այնուհետև ուղարկում Պետրոգրադի Սովետի նախագահի մոտ հետևյալ

[1] «Տեղեկատու», № 54, 1918։

բացիկով. «Կարգադրեցեք անմիջապես բարձել և Բաքու ուղարկել զրահապատ ավտոմեքենաներ՝ սպառազինման համառուսական կոլեգիայի Գերատեսչության ցուցակով»[1]։

Բացի դրանից Վ. Ի. Լենինը ծովային կոլեգիային հուլիսի 13-ին կարգադրում է ռազմանավեր փոխագրել Կասպից ծովը[2]։

Բաքու է ուղարկվում մեծ քանակությամբ զենք և զինամթերք։ Վ. Ի. Լենինի կարգադրությամբ հուլիսի 20-ին Ուկրաինական ռազմաճակատից հանվում և Բաքու է ուղարկվում ձախ էսեռ Պետրովի ջոկատը, որը մեծ դեր է կատարում գերմանա-թուրքական իմպերիալիստների դեմ մղվող պայքարում։

Սակայն, ինչպես նշում է Սուրեն Շահումյանը իր «Բաքվի Կոմունա» գրքում, Ի. Ստալինը այդ ջոկատի մի զգալի մասը պահում է իր մոտ։

Վ. Ի. Լենինի առաջարկով Սովետական կառավարությունը ճնշում է գործադրում Գերմանիայի վրա՝ հարձակումը կանգնեցնելու համար։

Գերմանական իմպերիալիստները սկզբում ձևացնում են, թե իբր իրենք հարձակմանը չեն մասնակցում, բայց երբ նրանց նավթ խոստացվեց իսկույն հանձն առան դադարեցնելու հարձակումը։

Վերջացնելով Գերմանիայի հետ վարվող բանակցությունները Վ. Ի. Լենինը հուլիսի 7-ին, դիշերվա ժամը 1-ին հեռագրում է Ի. Վ. Ստալինին[3]. «Բաքվի վերաբերմամբ ամենակարևորն է, որ դուք անընդհատ հարաբերությունների մեջ լինեք Շահումյանի հետ և որ Շահումյանը իմանա գերմանացիների առաջարկությունը, որ արվել է դեսպան Իոֆֆեին Բեռլինում, այն բանի առթիվ, որ գերմանացիները կհամաձայնեին դադարեցնել թյուրքերի հարձակումը Բաքվի վրա, եթե մենք գերմանացիներին երաշխավորենք նավթի մի մասը։ Իհարկե, մենք կհամաձայնենք»[4]։

Հուլիսի 8-ին, Ի. Ստալինը կատարելով Վ. Ի. Լենինի հանձնարարությունը, նամակ է գրում Շահումյանին՝ հայտնելով, որ Վրաստանի հարցում Սովետական իշխանությունը հավանաբար կզիջի Գերմանիային, եթե նա խոստանա, որ այսուհետև չի խառնվելու Հայաստանի և Ադրբեջանի գործերին։ Ինչ վերաբերվում է Բաքվին, գերմանացիները համաձայնվել են այն թողնել բոլշևիկներին, դրա փոխարեն պահանջելով նավթ, որը Սովետական կառավարությունը կտա։ Այնուհետև նա հայտնում է Շահումյանին, որ հաջողության դեպքում հարկավոր է Գանձակից հեռու չշարժվել և Վրաստանի սահմանները չմտնել, բանի որ այդ կարող է բարդություններ առաջացնել։ Վերջում Ի. Ստալինը հայտնում է, որ այդ բոլորը Վ. Ի. Լենինի առաջարկություններն են, որի հետ ինքը խոսել է հուլիսի 7-ին ուղիղ գծով[5]։

Այս նամակը մի ավելորդ անգամ ցույց է տալիս, որ Ի. Ստալինը չի հանդիսացել Կոմունայի «ոգեշնչողն ու ուղղություն տվողը», ինչպես գրում էին մեր պատմաբանները։

---

[1] «Լենինյան ժողովածու», հատ. XXXIV, էջ 36։

[2] Նույն տեղում, էջ 33։

[3] Կապը Մոսկվայի և Բաքվի միջև շատ վատ էր, այդ պատճառով էլ Լենինի խորհրդով այն պահպանվում էր Ի. Ստալինի միջոցով, որը այն ժամանակ աշխատում էր Ցարիցինում։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 669—670։

[5] Документы по истории гражданской войны в СССР, т. I, стр. 289—290.

Չնայած Բաքվի ժողկոմսովետի ձեռք առած բոլոր միջոցներին և Վ. Ի. Լենինի հոգատար վերաբերմունքին և օգնությանը, Կոմունայի դրությունը օր-օրի վրա վատանում էր։

Հուլիսի 13-ին Ստ. Շահումյանը հեռագրում է Վ. Ի. Լենինին. «Դրությունը ռազմաճակատում վատանում է։ Միայն մեր ուժերը բավական չեն։ Անհրաժեշտ է յուրջ օգնություն Ռուսաստանից... Սպասում եմ շտապ ռազմական օգնության և Ձեր ղեկավար ցուցումներին...»[1]։

Էսեռները, դաշնակները և մենշևիկները՝ օգտագործելով պարենային ճգնաժամը և ռազմաճակատում կրած պարտությունները, ավելի են ուժեղացնում իրենց ագիտացիան՝ պահանջելով Բաքու հրավիրել անգլիացիներին։

Հուլիսի 25-ին, չնայած բոլշևիկների ջանքերին, որոնք ասպացուցում էին անգլիացիներին կանչելու քաղաքականության ամբողջ կործանարարությունը, Բաքվի Սովետը համաձայնողական պարտիաների ճնշման տակ, ձայների անանշան տարբերությամբ (23) որոշում ընդունեց անգլիացիներին հրավիրելու մասին։

Հանդես գալով ԿԳԿ-ի հուլիսի 20-ի նիստում Վ. Ի. Լենինը հավանություն է տալիս անգլիացիների նկատմամբ Բաքվի բոլշևիկների վարած քաղաքականությանը, ասելով. «Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ որևէ համաձայնություն կնքելուց վճռականորեն հրաժարվելը Բաքվի ընկերների միակ ճիշտ քայլն է, քանի որ չի կարելի նրանց հրավիրել, առանց ինքնուրույն, սոցիալիստական իշխանությունը, թեկուզ և կտրված տերիտորիայում, վերածելու իմպերիալիստական պատերազմի ստրուկի»[2]։

Ստ. Շահումյանը, որպես Կենտրոնական Սովետական իշխանության ներկայացուցիչ, բողոքում է ընդունված որոշման դեմ և հայտարարում, որ բոլշևիկները վար են դնում իրենց լիազորությունները։

Բայց, չնայած այդ հայտարարությանը, հուլիսի 28-ին տեղի ունեցած բոլշևիկների պարտիական կոնֆերենցիան վճռեց առանց պայքարի իշխանությունը չհանձնել, հայտարարել զորահավաք և արագ կերպով կազմակերպել քաղաքի պաշտպանությունը։

Քաղաքը հայտարարվում է ռազմական դրության մեջ։ Հայտարարվում է 1883—1892 թթ. ծնվածների զորահավաք։ Նույն օրը տեղի ունեցավ զինվորների մի բազմամարդ ժողով, որին մասնակցում էին նաև բանվորական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Ժողովը ողջույնի ջերմ հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին։

Կոնտրռևոլյուցիոն պարտիաները ձախողեցին զորահավաքի գործը և քայքայեցին քաղաքի պաշտպանությունը։ Հատկապես ակտիվ էին գործում դաշնակցականները։

Հուլիսի 29-ին Վ. Ի. Լենինը հեռագրում է Ս. Դ. Շահումյանին. «Սովետների 5-րդ համագումարի և Կենտրոնական Սովետական իշխանության որոշման դեմ դաշնակների ամեն մի գործողություն դիտվելու է որպես ապստամբություն և որպես դավաճանություն։ Զորքեր ուղարկելու համար միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապես խոսք տալ չենք կարող»[3]։

---

[1] «Красный Архив», № 4—5, стр. 22, 1938.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 9։

[3] Նույն տեղում, հատ. 35, էջ 380։

Հուլիսի 30-ին լքում է ռազմաճակատը Բիչերախովը։ Թուրքական զորքերը մոտենում են քաղաքին։

Այդպիսի պայմաններում Բաքվի ժողկոմսովետը վար է դնում իր լիազորությունները։

Համաձայնողական պարտիաների ներկայացուցիչներից կազմվեց «Յենտրոկասպի»-ի Կոնտրոլյուցիոն կառավարությունը։

Բոլշևիկյան ամբողջ կազմակերպությունը՝ զորքերով հանդերձ ճամբար է խփում Պետրովսկի հրապարակում, որը կոչվում էր «Շահումյանի միջնաբերդ և ակտիվ կերպով մասնակցում էր քաղաքի պաշտպանությանը։

Մինչև անգլիացիների Բաքու ժամանելը Ս. Շահումյանը դեռևս հույս ուներ ղրավելու իշխանությունը և կազմակերպելու ինտերվենտների դեմ մղվող պայքարը։

Այդ է ցույց տալիս օգոստոսի սկզբին տեղի ունեցած բոլշևիկների պարտիական կոնֆերենցիան, որտեղ Ս. Շահումյանը հանդես գալով զեկուցումով ասաց. «...Մենք կկործանվենք, եթե քաղաքացիական պատերազմի միջոցով իշխանությունը չգրավենք»[1]։

Դնելով իշխանության գրավման հարցը, Ս. Շահումյանը ցանկանում էր այն իրագործել Ռուսաստանից սպասվող թեկուզ և փոքրաթիվ զինված ուժերի և Բաքվի բոլշևիկների միացյալ ջանքերով։ Բնական է, որ եթե միայն սեփական ուժերով հնարավոր լիներ իշխանությունը պահել, Բաքվի ժողկոմսովետը հրաժարական չէր տա։

Դա հաստատվում է Աստրախանի Սովդեպի նախագահ՝ Անիսիմովի ստորագրությամբ Լենինին և Սվերդլովին ուղարկված Շահումյանի հեռագրով (այն մինչև այժմ էլ սխալմամբ վերագրվում է Անիսիմովին), որտեղ ասվում էր. «Դրությունը այնպես է, որ եթե հիմա անմիջապես 1000 հոգի տրվի, ապա իշխանությունը կվերականգնվի և Բաքուն կկարողանա դիմանալ մինչև նոր ուժերի ժամանումը»[2]։

Վ. Ի. Լենինը այդ օրերին ավելի մեծ ուշադրություն էր նվիրում Բաքվի օգնության կազմակերպմանը։

Հուլիսի վերջին և օգոստոսի սկզբներին Բաքու է ուղարկվում 80 թնդանոթ, 160 գնդացիր, 1000 հրացան, զրահապատ ավտոմեքենաներ, 20.000 փամփուշտ և այլն։ Ժամանում են նաև որոշ քանակությամբ զինված ուժեր։

Օգոստոսի 9-ին Վ. Ի. Լենինը հեռագրում է Աստրախանի Սովդեպի նախագահ Անիսիմովին.

«Դրությունը Բաքվում ինձ համար այնուամենայնիվ պարզ չէ։ Որտե՞ղ է Շահումյանը։

...Դուք գիտեք, որ ես լիովին վստահում եմ Շահումյանին։ Այստեղից չի կարելի հասկանալ դրությունը և արագ օգնելու հնարավորություն չկա»[3]։

Ստանալով Շահումյանի հեռագիրը 1000 հոգի ուղարկելու մասին, Վ. Ի. Լենինը անմիջապես հեռագրում է Սարատովի և Ցարիցինի ռազմական կոմիսարներին՝ հայտնելով, որ Լենինի անվան գունդը գնում է դեպի Բաքու և հարկավոր է շտապ միջոցներ ձեռք առնել, որպեսզի նա ժամանակին տեղ

---

[1] «Бакинский рабочий», № 211, 1922.

[2] Труды Аз. филиала Института марксизма-ленинизма, т. XII, стр. 228.

[3] Վ. Ի. ԼԵՆԻՆ. Երկեր, հատ. 35, էջ 360։

հասնի։ Հեռագրում նշվում էր, որ այն բոլորը, ովքեր կհամարձակվեն դանգաղեցնել գնդի առաջշարժումը, կենթարկվեն խիստ պատասխանատվության[1]։

Չնայած մեծ ճիգերին, ռազմական օգնությունը տեղ չհասավ։ Լենինի անվան դունդը կանգ առավ Ցարիցինի մոտ՝ չկարողանալով առաջ գնալ։ Օգոստոսի 23-ին Վ. Ի. Լենինը՝ խոսելով Բաքվին ուղարկված օգնության մասին, գրում էր. «Ռազմական օգնությունը չգիտենք որտեղ է, կարծում ենք կանգ է առել Ցարիցինի մոտ»[2]։

Մինչ այդ ժամանեցին անգլիացիները, որի կապակցությամբ օգոստոսի 10-ին Պետրովսկի հրապարակում տեղի ունեցավ երկրորդ պարտիական կոնֆերենցիան, որտեղ քննարկվեց հետագա անելիքների հարցը։

Ստ. Շահումյանը, իր ելույթում պարզաբանելով ստեղծված դրությունը, նշում էր, որ անգլիացիների Բաքու ժամանելուց հետո դրությունը փոխվել է, քանի որ չի կարելի անցնել դավաճանների շարքը և կռվել անգլիական զորքերի հետ՝ ի փառս անգլիական իմպերիալիզմի։ Պայքարել միայն սեփական ուժերով հնարավոր չէր։ Այդ պատճառով Շահումյանն առաջարկում է զինված ուժերը, զենքն ու զինամթերքը փոխադրել Աստրախան, օգտագործել այլ ռազմաճակատներում, մինչև Բաքվի ազատագրության գործի կազմակերպումը։

Աստրախան մեկնելը զորքը և զինամթերքը փրկելու միակ միջոցն էր։ Ոչ անգլիացիները և ոչ էլ «Ցենտրոկասպի»-ի կառավարությունը չէին հանդուրժի բոլշևիկների զինված ուժերի ներկայությունը և անպայման զինաթափ կանեին՝ սպառնալիքից ազատվելու և զենքն ու զինամթերքը գրավելու համար։

Այդ էր պատճառը, որ օգոստոսի 14-ին Բաքվի կոմունարները 17 շոգենավով, զորքով և զինամթերքով բաց ծով են դուրս գալիս և ուղղություն վերցնում դեպի Աստրախան։ Բայց ճանապարհին նրանք շրջապատվեցին «Ցենտրոկասպի»-ի նավերով, հետ բերվեցին Բաքու և բանտարկվեցին։

Ինչպես կանխատեսում էր Ստ. Շահումյանը, անգլիացիները քայքայեցին քաղաքի պաշտպանությունը։

Շուտով քաղաքի դրությունը դառնում է անհուսալի։ Անգլիացիները և «Ցենտրոկասպի»-ի ղեկավարները խուճապահար փախչում են քաղաքից, բանտում թողնելով Կոմունայի ղեկավարներին, լավ իմանալով, որ նրանք կհոշոտվեն թուրքական հորդաների կողմից։

Ա. Միկոյանին մեծ դժվարություններով հաջողվում է բանտից ազատել Շահումյանին իր զինակիցներով և հասցնել նավահանգիստ, որտեղից նրանք պետք է մեկնեին Աստրախան։ Սակայն «Թուրքմեն» նավի անձնակազմը նավը տանում է Կրասնովոդսկ, որն այն ժամանակ փաստորեն օկուպացիայի էր ենթարկված անգլիական իմպերիալիստների կողմից։

Կրասնովոդսկում Բաքվի կոմունարները ձերբակալվում են։

Վ. Ի. Լենինը խիստ կերպով անհանգստացած էր։ Նա դիմում է անգլիական հրամանատարությանը, առաջարկելով Բաքվի կոմունարներին փոխանակել անգլիական ռազմագերիների հետ, բայց անգլիացիները չեն պատասխանում։ Վ. Ի. Լենինը այդ հարցով դիմում է նաև Վրաստանի և Հայաստանի կառավարություններին, բայց ոչ մի արդյունք չի ստանում։ Կոնտրռևոլյուցիան ոչ մի գնով չէր համաձայնում իր ճանկերից բաց թողնելու ռևոլյուցիայի հերոսներին։

---

[1] Տես «Լենինյան ժողովածու», հատ. XXXIV, էջ 39։
[2] Նույն տեղում, էջ 41—42։

ԱԿԱԴԵՄԻԱ

1918 թ. սեպտեմբերի 20-ին Անդրկասպյան անմարդաբնակ ավազուտներում Անդրկովկասի բանվոր դասակարգի և գյուղացիության լավագույն զավակները գազանաբար հոշոտվեցին անգլիական իմպերիալիստների և նրանց սպասարկուներ՝ էսեռների կողմից։

Այսպիսով, ուսումնասիրելով Բաքվի կոմունայի պատմությունը, մենք տեսնում ենք, որ այն ղեկավարվել է Վ. Ի. Լենինի կողմից և հանդիսանում է Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումների տարեգրության փառավոր էջերից մեկը։

Ինչ վերաբերվում է Կոմունայի պարտության պատճառներին, ապա այն բացատրվում է ոչ թե նրա ղեկավարների թույլ տված տակտիկական սխալներով, այլ տվյալ ժամանակաշրջանում դասակարգային ուժերի հարաբերակցության փոփոխությամբ Բաքվում, միջազգային իմպերիալիզմի և երիտասարդ Սովետական պետության ուժերի անհավասար հարաբերությամբ։